ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ «ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ»
ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՈՒԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սուքիասյան,

ի պատասխան Ձեր 26.12.2024թ. հ.414-2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Ազատության հրապարակի ստորգետնյա ավտոկայանատեղի վճարի համար նախատեսված 900015000715 եկամտային հաշվեհամարին 2023 թվականին վճարվել է շուրջ 207,876.0 հազար ՀՀ դրամ, իսկ 2024 թվականին՝ շուրջ 270,952.0 հազար ՀՀ դրամ:

2023 թվականին ավտոկայանատեղի վճարի համար նախատեսված 900015211593 եկամտային հաշվեհամարին վճարվել է շուրջ 963,316.0 հազար ՀՀ դրամ:

2024 թվականին «Ա» և «Բ» գոտիների ավտոկայանատեղի վճարի համար նախատեսված համապատասխանաբար 900015002430 և 900015211593 եկամտային հաշվեհամարներին վճարվել է շուրջ 2,006,931.0 հազար ՀՀ դրամ, որից «Ա» գոտու համար՝ շուրջ 1,521,236.0 հազար ՀՀ դրամ, իսկ «Բ» գոտու համար՝ շուրջ 485,695.0 հազար ՀՀ դրամ:

01.01.2023-31.12.2023թթ. ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի ավտոկայանատեղի վճարի 900015211593 եկամտային հաշվեհամարին տարեկան դրույքաչափին /12000-ական դրամ/ համապատասխան վճարվել է՝ 546,936.0 հազար ՀՀ դրամ, ամսական /2000-ական/՝ 82,170.0 հազար ՀՀ դրամ, շաբաթական /1000-ական/՝ 8,064.0 հազար ՀՀ դրամ, օրական /500-ական/՝ 21,366.0 հազար ՀՀ դրամ և վերը նշված դրույքաչափերից տարբերվող՝ 255,238.6 հազար ՀՀ դրամ:

01.01.2024-31.12.2024թթ. ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի ավտոկայանատեղի վճարի 900015002430 եկամտային հաշվեհամարին տարեկան դրույքաչափին /160000-ական դրամ/ համապատասխան վճարվել է՝ 608,640.0 հազար ՀՀ դրամ, ամսեկան /18000-ական դրամ/ 277,830.0 հազար ՀՀ դրամ, շաբաթական /5000-ական/՝ 60,265.0 հազար ՀՀ դրամ, օրական /2000-ական/՝ 60,080.0 հազար ՀՀ դրամ և վերը նշված դրույքաչափերից դուրս գտնվող՝ 464,647.251 հազար ՀՀ դրամ:

01.01.2024-31.12.2024թթ. ընկած ժամանակահատվածում Երևանի քաղաքապետարանի ավտոկայանատեղի վճարի 900015211593 եկամտային հաշվեհամարին տարեկան դրույքաչափին /24000-ական/ համապատասխան վճարվել է՝ 107,496.0 հազար ՀՀ դրամ, ամսական /4000-ական/ 15,828.0 հազար ՀՀ դրամ,

շաբաթական /2000-ական/՝ 2,132.0 հազար ՀՀ դրամ, օրական /1000-ական/՝ 4,740.0 հազար ՀՀ դրամ և վերը նշված դրույքաչափերից տարբերվող՝ 339,061.543 հազար ՀՀ դրամ:

Վերը նշված վճարումներում առկա են նաև 2023 թվականի տարեվերջում կատարված, սակայն 2024 թվականի ավտոկայանատեղի տարեկան դրույքաչափին և 2024 թվականի տարեվերջում վճարված, սակայն 2025 թվականի ավտոկայանատեղի տարեկան դրույքաչափին համապատասխան կատարված վճարումներ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ